ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

09.04.2024Թ. ՆԻՍՏԻ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

վարչական իրավախախտման վերաբերյալ

Թիվ ՎԻՎ/55/2024 գործով

ՀՀ, ք. Երևան

2024 թվականի ապրիլի 9-ին տեղի ունեցավ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող Մարիամ Գալստյանը (նիստը նախագահող), Հանձնաժողովի անդամներ Արամայիս Փաշինյանը և Լիլիթ Ալեքսանյանը:

Համաձայն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի՝ նիստն իրավազոր էր, քանի որ դրան ներկա էին Հանձնաժողովի առնվազն երեք անդամ:

Նիստին ներկա էին նաև Հանձնաժողովի վարույթների և իրավական ապահովման վարչության պետ Գյուլնարա Սարգսյանը և նույն վարչության գլխավոր իրավաբան Ելենա Արսենյանը:

Օրակարգում ներառված էր Պաշտպանության նախարարի ընտանիքի անդամ Արմինե Սարիբեկի Մուրադյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման կապակցությամբ Հանձնաժողովի կողմից հարուցված թիվ ՎԻՎ/55/2024 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը, վարույթի արդյունքների ամփոփումը և որոշման կայացումը:

Գործի քննությանը ներկայացել էր վարույթի մասնակից Արմինե Սարիբեկի Մուրադյանի ներկայացուցիչ Հրայր Հովակիմյանը (հիմք՝ 08.04.2024 թվականին տրված

լիազորագիր) (այսուհետ նաև՝ Ներկայացուցիչ): Վերջինիս բացատրվեցին վարչական պատասխանատվության ենթարկվող անձի իրավունքները:

Նիստը նախագահող Մ. Գալստյանը ներկայացրեց, որ Հանձնաժողովը, հիմք ընդունելով yerkir.am կայքում 2023 թվականի օգոստոսի 15-ին «Պապիկյանի հարսանիքի $ 105,000-ի առեղծվածը. պարզաբանումը՝ նոր հարցերի տեղիք» և 2023 թվականի օգոստոսի 28-ին «Հատուկ նիստ՝ Պապիկյանի՝ $ 105.000 առեղծվածը բացահայտելու համա՞ր. ԿԿՀ-ի արտառոց պատասխանը» վերտառությամբ հրապարակումները և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, իրականացրել է Պաշտպանության նախարարի ընտանիքի անդամ Արմինե Սարիբեկի Մուրադյանի կողմից 2023 թվականի մայիսի 29-ին ներկայացված «Պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ 2022 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի» տարեկան հայտարարագրի (այսուհետ նաև՝ Հայտարարագիր) վերլուծություն, որի արդյունքում պարզել է, որ Հայտարարագրի «Գ.1 Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամի եկամուտներ» բաժնի «Գ.1.1. Հաշվետու տարվա եկամուտներ» ենթաբաժնում Արմինե Սարիբեկի Մուրադյանի կողմից տվյալներ չեն ներկայացվել հարսանեկան միջոցառումից ստացված 2,100,000 ՀՀ դրամ, 17,700 ԱՄՆ դոլար, 2,000 եվրո եկամտի վերաբերյալ:

Նիստի ընթացքում քննարկվեց 2024 թվականի մարտի 12-ին Հանձնաժողովում մուտքագրված թիվ Մ-1133-2024 գրությամբ վարույթի մասնակցի կողմից արձանագրված իրավախախտման առնչությամբ ներկայացված պարզաբանումը (այսուհետ նաև՝ Պարզաբանում):

Գրավոր պարզաբանմամբ վարույթի մասնակիցը հայտնել էր, որ Հայտարարագրում ներկայացված են տվյալներ վկայակոչված դրամական միջոցների վերաբերյալ և վերջինիս կողմից այդ հանգամանքը հաստատելու նպատակով ներկայացվել են նաև բանկային քաղվածքներ: Հայտնել է նաև, որ դեռևս 2022 թվականի դեկտեմբերի 23-ին « » ՓԲԸ-ում ներկայացվել է ֆինանսական միջոցների ծագման աղբյուրի վերաբերյալ հայտարարագիր, որտեղ նշվել է նշված դրամական միջոցների՝ հարսանյաց արարողությունից որպես նվեր ստանալու հանգամանքը:

Ներկայացված գրավոր պարզաբանմանը կից ներկայացվել են 01.12.2022-31.12.2022թթ. ընկած ժամանակահատվածում՝ վերջինիս անվամբ սպասարկվող հաշիվների բանկային քաղվածքները, որոնց ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ « » ՓԲԸ-ի՝ Արմինե Մուրադյանի անվամբ սպասարկվող, ՀՀ դրամով առկա բանկային հաշվին ***2022 թվականի դեկտեմբերի 23-ին մուտքագրվել է 2,100,000.00 ՀՀ դրամ, իսկ արտարժույթով սպասարկվող բանկային հաշվին՝ 17,700.00 ԱՄՆ դոլար դրամական միջոցներ***: Նշված քաղվածքներին կից վարույթի մասնակցի կողմից բանկային քաղվածքներով ներկայացված ֆինանսական միջոցների ծագման աղբյուրի վերաբերյալ հայտարարագրում ներկայացված տեղեկատվության համաձայն՝ մուտքագրվող գումարը ծագել է իր հարսանիքից ստացված

նվիրատվությունից: Միաժամանակ, գրավոր պարզաբանմամբ Արմինե Մուրադյանը հայտնել էր, որ նշված՝ *2,100,000 ՀՀ դրամ, 17,700 ԱՄՆ դոլար, 2,000 եվրո գումարները ստացվել են 2022 թվականին տեղի ունեցած հարսանեկան միջոցառման ժամանակ 490 հյուրերի կողմից և որպես մեկ անձի հաշվարկով տրամադրված կանխիկ դրամի տեսքով ստացած նվեր-գումարի առավելագույն չափը չի գերազանցել 150.000 ՀՀ դրամը:*

Գործի քննությանը մասնակցող Ներկայացուցչի կողմից ներկայացվեցին նաև բացատրություններ և դիրքորոշումներ վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ: Մասնավորապես, վերջինս ներկայացրեց, որ՝ վարույթի մասնակցի կողմից Հանձնաժողով ներկայացրած Հայտարարագրում վարույթով քննարկվող ոչ ամբողջական հայտարարագրված եկամուտներն, այնուամենայնիվ, ներկայացված են որպես դրամական միջոցների մնացորդներ: Այս առնչությամբ ներկայացվել են նաև իր բանկային քաղվածքները:

Ներկայացուցիչը ներկայացրեց բացատրություն առ այն, որ իրեն լիազորած անձը՝ Արմինե Մուրադյանը, Հայտարարագրում իր հարսանիքից ստացված եկամուտը թաքցնելու միտում չի ունեցել, ընդհակառակը, վերջինս անակնկալ կերպով տեղեկացել է Հայտարարագրի եկամուտներ բաժնում քննարկվող եկամուտները փաստացի լրացված չլինելու մասին: Այս առնչությամբ նշեց նաև, որ, ըստ լիազորած անձի, հնարավոր է նշված տվյալի բացակայությունը տեխնիկական խնդիրներով է պայմանավորված: Ըստ Ներկայացուցչի, Արմինե Մուրադյանն իրեն հայտնել է, որ վերջինս անձամբ է լրացրել հայտարարագիրը, իսկ մինչ այդ հարսանիքից ստացած նվիրատվությունների վերաբերյալ տվյալները լրացուցիչ ճշտել է իր ամուսնու հետ, այդ իսկ պատճառով հիշում է, որ եկամուտները լրացրել է Հայտարարագրի համապատասխան բաժնում:

Ներկայացուցիչը Հանձնաժողովին ներկայացրեց նաև դիրքորոշում այն մասին, որ իրեն լիազորած անձի գործողություններում առկա չէ Օրենսգրքի 10-րդ հոդվածով սահմանված զանցանքի բաղկացուցիչ մաս կազմող մեղքի դրսևորումներ՝ նշելով, որ Արմինե Մուրադյանը Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքը՝ հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը՝ որևէ կերպ չէր կարող դիտավորությամբ կատարված համարել: Քննարկվող պարագայում բացակայում է կատարած գործողության հակահրավական բնույթի և վնասակար հետևանքների մասին գիտակցական, կամային հատկանիշը, քանի որ նշված դրամական միջոցներն, արդեն իսկ Արմինե Մուրադյանի կողմից հայտարարագրվել են, ինչից ակնհայտ է, որ Հայտարարագրում այդ միջոցները թաքցնելու սուբյեկտիվ կողմն առկա չէ: Վերջինս նշեց նաև, որ դեռևս 2022 թվականի դեկտեմբերի 23-ին « » ՓԲԸ-ում ներկայացրել է ֆինանսական միջոցների ծագման աղբյուրի վերաբերյալ հայտարարագիր (կից ներկայացված է Պարզաբանմամբ), որով պատասխանատու կերպով հաստատել է նշված դրամական միջոցների՝ հարսանյաց արարողությունից որպես նվեր ստանալու հանգամանքը:

Այսինքն, Արմինե Մուրադյանն իր կողմից կանխիկ ձևով տնօրինվող՝ տվյալ պարագայում հարսանեկան միջոցառումից ստացված գումարը, բանկին տրված հայտարարությամբ՝ ծագման աղբյուրի նշմամբ մուտքագրել է իր անվամբ սպասարկվող բանկային հաշիվներին: Հետևաբար, եթե բանկը կասկածներ ունենար դրանց ծագման օրինականության առումով, կդիմեր համապատասխան իրավասու մարմիններին՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հակազդման գործող իրավական կառուցակարգերի միջոցով համապատասխան ստուգողական գործողություններ իրականացնելու նպատակով:

Նիստը նախագահող Հանձնաժողովի անդամը (Մ. Գալստյան) Ներկայացուցչի կողմից վկայակոչված՝ դրամական միջոցների օրինականության կապակցությամբ ներկայացրեց դիտարկում առ այն, որ սույն գործով քննարկվում է վարչական իրավախախտում թույլ տալու հարցը, իսկ ներկայացուցչի կողմից մատնանշված հայտարարագրում տվյալի թաքցնելու միտում չունենալու կամ դրանց օրինական լինելու վերաբերյալ փաստարկները, կրում են քրեաիրավական բնույթ: Ավելին, եթե Հանձնաժողովը կասկածներ ունենար տվյալի օրինականության վերաբերյալ, ապա հայտարարագրի վերլուծության նյութերը կուղարկեր Գլխավոր դատախազություն:

Հանձնաժողովի անդամի (Ա. Փաշինյան) այն հարցին, թե Արմինե Մուրադյանը ընդունում է արդյո՞ք, որ Հայտարարագրի եկամուտներ բաժնում տվյալ չի հայտարարագրվել իր կողմից, Ներկայացուցիչը պարզաբանեց, որ ընդունում է, որ եկամտի վերաբերյալ տվյալը համապատասխան բաժնում ներկայացված չէ, միաժամանակ հավելելով, որ Հանձնաժողովի կողմից վարույթի մասնակցին հասցեագրված ծանուցումը և վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը ստանալով՝ անակնկալի է եկել այդ փաստի առնչությամբ, որովհետև վստահ է եղել, որ եկամուտները լրացրել է ամբողջությամբ, իսկ լրացված չլինելը (չպահպանվելը) զուտ տեխնիկական խնդրի արդյունք է, ինչը վարույթի մասնակցի կողմից բացահայտվել է միայն նշված փաստաթղթերի ստացմամբ պայմանավորված՝ տվյալների ստուգումից հետո: Վարույթի մասնակիցը որևէ դիտավորություն չի ունեցել թաքցնելու ստացված եկամուտը և դրա մասին է վկայում վերջինիս կողմից բանկում գումարը մուտքագրելիս գումարի ծագման աղբյուրի վերաբերյալ ներկայացված հայտարարագիրը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարսանեկան միջոցառման և մեծաքանակ հյուրերի մասնակցության վերաբերյալ տեղեկատվությունը հանրայնացված է եղել և որևէ գաղտնիության տարր չի պարունակել՝ բանկում նշված գումարի մուտքագրման ընթացքում ֆինանսական միջոցների ծագման աղբյուրի արժանահավատության վերաբերյալ կասկածներ ևս չեն առաջացել: Բացի այդ, որևէ մարմնի կողմից չի հաստատվել նշված դրամական միջոցների հանցավոր կամ կասկածելի այլ ճանապարհով ձեռքբերման փաստը: Միաժամանակ, ընդգծեց նաև, որ դրամական միջոցների վերաբերյալ տվյալներ, այնուամենայնիվ, որևէ կերպ արտացոլվել են վարույթի մասնակցի կողմից ներկայացված Հայտարարագրում: Նշվածի առնչությամբ նշեց նաև, որ վարույթի մասնակցի ամուսնու՝ Սուրեն Պապիկյանի, կողմից ներկայացված 2022 թվականի

տարեկան հայտարարագրում հարսանեկան միջոցառումից ստացված եկամուտն ամբողջությամբ հայտարարագրված է: Վերոնշյալից ելնելով՝ Ներկայացուցիչն առաջարկեց վկայակոչված փաստական հանգամանքները, ինչպես նաև վարույթի մասնակցի մեղքի բացակայության վերաբերյալ պնդումները հաշվի առնել վարչական պատասխանատվության հարցը քննարկելիս:

Հանձնաժողովի անդամը (Մ. Գալստյան) նշեց այն հանգամանքը, որ օրենքով հայտարարագրման ենթակա ցանկացած տվյալի չհայտարարագրումն ինքնին արդեն համարվում է զանցանք և ընգծվեցին սույն գործով առկա հետևյալ հանգամանքները, որոնց հիման վրա վարույթի մասնակցի կողմից կատարված արարքը չի կարող որակվել նվազ նշանակության, մասնավորապես՝ եկամուտների գերակշռող մասը գոյացել է հարսանեկան միջոցառման ժամանակ ստացված նվիրատվության միջոցով, նշված տվյալները վերահսկելի չեն և դուրս են Հանձնաժողովի տեսադաշտից, քանի որ որպես պարտադիր հայտարարագրման ենթակա առանձին և ինքնուրույն տվյալներ որևէ այլ ձևով ստուգման ենթակա չէն: Բացի այդ, նշված տվյալները անձի կողմից անձամբ և ինքնուրույն լրացվող տվյալներ են, այլ ոչ թե այլ համակարգերից ներբեռնվող (օր՝ Կադաստրի պետական կոմիտեի, ՊԵԿ-ի, Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության), հետևաբար դրանց լրացման պարագայում՝ չպահպանվելը անհնար էր, ավելին, վարույթի մասնակցի կողմից ներկայացված Հայտարարագրի եկամուտներ բաժնում ստացված այլ եկամտի վերաբերյալ տվյալներ, այնուամենայնիվ, ներկայացված են, հետևաբար նաև պահպանվել են: Անդրադառնալով Ներկայացուցչի կողմից վկայակոչված այն հանգամանքին, որ վարույթի մասնակցի ամուսնու՝ Սուրեն Պապիկյանի, կողմից ներկայացված հայտարարագրում հարսանեկան միջոցառումից ստացված եկամուտն ամբողջությամբ հայտարարագրված է՝ Հանձնաժողովի անդամը (Մ. Գալստյան) հավելեց, որ տվյալ պարագայում Սուրեն Պապիկյանի կողմից ստացված գումարը մի քանի օր անց մուտքագրվել է վերջինիս բանկային հաշիվներին, իսկ սույն դեպքում՝ միայն շուրջ մեկ տարի անց:

Հանձնաժողովի անդամի (Լ. Ալեքսանյան) այն հարցին, թե կոնկրետ ի՞նչ տեխնիկական խնդրով է պայմանավորված եղել Արմինե Մուրադյանի կողմից Հայտարարագրի եկամուտներ բաժնում տվյալների չհայտարարագրումը, Ներկայացուցիչը պարզաբանեց, որ Հայտարարագրում նշված 2,100,000 ՀՀ դրամ, 17,700 ԱՄՆ դոլար, 2,000 եվրո գումարի՝ որպես եկամուտ չհայտարարագրվելու խնդիրը կապված է եղել ոչ թե հայտարարագրերի էլեկտրոնային համակարգում մուտքագրված տվյալների պահպանման, այլ հնարավոր է համացանցի կամ այլ տեխնիկական խնդրի հետ:

Հաջորդիվ, Ներկայացուցիչը, վկայակոչելով Հանձնաժողովի կողմից նախկինում կիրառված իրավակիրառ պրակտիկան, ներկայացրեց այն դեպքերը, երբ Հանձնաժողովն արարքը հանրային վտանգավորության տեսանկյունից նվազ նշանակություն ունեցող է որակել, մասնավորապես՝ մի դեպքում երբ անհրաժեշտ բաժնում չհայտարարագրված տվյալն օրենքով պահանջվող բոլոր այլ վերաբերելի

տվյալների պարտադիր ներկայացմամբ՝ հայտարարագրված է եղել մեկ այլ բաժնում, իսկ մեկ այլ դեպքում, երբ չհայտարարագրված կամ սխալ հայտարարագրված դրամական միջոցների ծագման աղբյուրը հանդիսացել է անձի ստացած աշխատավարձը կամ եկամտահարկի վերադարձի արդյունքում ստացված գումարը: Վկայակոչվեց նաև Վճռաբեկ դատարանի որոշումը (հայցվոր Աշխեն Դաշյան), որի շրջանակներում վճռաբեկ ատյանն անդրադարձել է վարչական իրավախախտման նվազ նշանակության բովանդակությանը: Ընդգծեց այն, որ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման համաձայն՝ իրավախախտման նվազ նշանակությունն ընկալվում է որպես գործողություն կամ անգործություն, որը, թեև ձևական առումով պարունակում է վարչական զանցակազմի հատկանիշներ, բայց հաշվի առնելով կատարված իրավախախտման բնույթը և իրավախախտի անձը, վնասի չափը և հետևանքների ծանրությունը՝ էականորեն չի խախտում պահպանվող հասարակական հարաբերությունները: Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ իրավախախտման նվազ նշանակությունը գնահատողական կատեգորիա է, որը պահանջում է գործի քննության համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների, պաշտպանվող հասարակական հարաբերություններին սպառնացող վտանգի բնույթի և աստիճանի, անձին, հասարակությանը կամ պետությանը վնաս պատճառելու սպառնալիքի գնահատում: Ներկայացուցիչն այս առումով նշեց այն որ, թեև Հանձնաժողովի կողմից նախորդիվ կայացված որոշումներով կիրառված նվազ նշանակության գործերով հաստատված հանգամանքները նույնական չեն, այնուամենայնիվ, դրանք բովանդակային առումով նման են՝ հաշվի առնելով այն, որ Հանձնաժողովի կողմից էական է համարվել եկամտի ծագման աղբյուրը, իսկ այս պարագայում եկամտի ծագման աղբյուրի հետ կապված կասկածներ չպետք է հարուցվեն, հանրահայտ փաստ է, որ 2022 թվականին տեղի է ունեցել հարսանեկան միջոցառում, որի ընթացքում մեծաքանակ հյուրերն ավանդույթի ուժով նվիրել են նորապսակներին դրամական միջոցներ:

Այս առումով Ներկայացուցիչը նշեց նաև, որ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված իրավակարգավորումների համաձայն՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր: Սակայն, տվյալ գործով քննարկվող միջոցառման ընթացքում հնարավոր չէր ապահովել օրենքով սահմանված՝ նվիրատվության պայմանագրի գրավոր ձևին վերաբերելի կարգավորումների պահանջը: Հետևաբար, որևէ փաստաթղթով չի կարող հավաստվել, որ նշված 2,100,000 ՀՀ դրամ, 17,700 ԱՄՆ դոլար, 2,000 եվրո գումարը ստացվել է հարսանեկան միջոցառման ժամանակ հյուրերի կողմից նվիրատվության արդյունքում:

Վերոնշյալը հաշվի առնելով՝ վարույթի մասնակցի Ներկայացուցիչը խնդրեց սույն գործով ևս կիրառել նվազ նշանակություն:

Նիստի ընթացքում ուսումնասիրվեցին գործում առկա ներկայացված բոլոր նյութերը (այդ թվում նաև՝ բանկային հաշիվների քաղվածքները, բանկ ներկայացված հայտարարագիրը):

Արդյունքում, արձանագրվեց, որ Պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի ընտանիքի անդամ Արմինե Մուրադյանի կողմից 2023 թվականի մայիսի 29-ին ներկայացված «Պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ 2022 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագրի» վերլուծության արդյունքում հայտնաբերված՝ առերևույթ իրավախախտումը կայանում է՝ Հայտարարագրի «Գ.1 Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամի եկամուտներ» բաժնի «Գ.1.1. Հաշվետու տարվա եկամուտներ» ենթաբաժնում հարսանեկան միջոցառումից ստացված 2,100,000 ՀՀ դրամ, 17,700 ԱՄՆ դոլար, 2,000 եվրո եկամուտի վերաբերյալ տվյալներ չներկայացնելու արարքում:

Միաժամանակ, արձանագրվեց նաև, որ Հայտարարագրի Գ.1. Պաշտոնատար անձի ընտանիքի անդամի եկամուտներ բաժնում ստացված եկամուտների վերաբերյալ տվյալներ չեն ներկայացվել, սակայն Հայտարարագրի «Բ.6. **Դրամական միջոցներ» բաժնի** «Բ.6.1. Բանկային հաշիվների մնացորդներ» և «Բ.6.5. Կանխիկ դրամ» ենթաբաժիններում դրանք ներկայացվել են ներառյալ օրենքով պահանջվող հայտարարագրման ենթակա անհրաժեշտ տվյալները (դրամական միջոցի չափը, ծագման աղբյուրը, տեսակը, արժույթը): Հայտարարագրում ներկայացված դրամական միջոցների *մնացորդների ծագման աղբյուրը, ինչպես կանխիկ (***2000 եվրո գումարը***), այնպես էլ անկանխիկ* (**2,100,000** ՀՀ դրամ, ***17,700.00 ԱՄՆ*** դոլար) *համընկնում է* հայտարարատու անձի կողմից Պարզաբանմանը կից ներկայացված բանկային քաղվածքներով հավաստվող (բանկին ներկայացված հայտարարությամբ) եկամուտների ծագման աղբյուրի հետ, որը, տվյալ դեպքում, հանդիսանում է հարսանեկան միջոցառումից ստացված նվեր-գումարը:

Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված է վարչական պատասխանատվություն հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար:

Հանձնաժողովն արձանագրեց, որ Հայտարարագրի եկամուտներ բաժնում պարտադիր հայտարարագրման ենթակա են հաշվետու տարվա ընթացքում հայտարարատու անձի կողմից ստացված բոլոր եկամուտների վերաբերյալ տվյալները, որպես ինքնուրույն և առանձին տվյալ, անկախ այն հանգամանքից, որ դրանք հայտարարագրված են մեկ այլ բաժնում:

Անդրադառնալով Ներկայացուցչի կողմից վկայակոչված մեկ այլ դաշտում տվյալի ներկայացման, ինչպես նաև ծագման աղբյուրի հավաստիության առնչությամբ Հանձնաժողովի իրավակիրառ պրակտիկային՝ Հանձնաժողովի անդամը (Մ. Գալստյան) նշեց, որ վարչական մարմինն արարքը նվազ նշանակության որակելիս կոնկրետ գործերով իր տիրապետման տակ ունեցել է հավաստի և ստուգման ենթակա փաստաթղթեր, մասնավորապես աշխատավարձի վերաբերյալ բանկային հաշվի վերաբերյալ քաղվածք, Պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված համապատասխան փաստաթուղթ: Նշված գործերով Հանձնաժողովն իր որոշման հիմքում դրել է վերաբերելի ապացույցներ, որոնք վերահսկելի տվյալներ են արտացոլում և ռիսկայնության առումով Հանձնաժողովի կասկածները փարատվում են

համապատասխան տվյալների ստուգման միջոցով: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ Հանձնաժողովին չեն ներկայացվել համապատասխան տվյալների արժանահավատությունը հավաստող ապացույցներ, այլ ներկայացված տվյալները հիմնված են միայն վարույթի մասնակիցների հայտարարությունների և Հանձնաժողովին ոչ հասանելի ստուգման ենթակա փաստաթղթավորված ապացույցների վրա, ապա նշված պարագայում Հանձնաժողովը տվյալների արժանահավատությունը ստուգելու որևէ գործիքակազմ չունենալու պայմաններում չի կարող արձանագրված առերևույթ իրավախախտումը նվազ նշանակության որակել: Միաժամանակ, Հանձնաժողովի երկու անդամները (Լ. Ալեքսանյան և Մ. Գալստյան) ընդգծեցին այն հանգամանքը, որ վարույթի մասնակցի կողմից հարսանեկան միջոցառումից ստացված 2,100,000 ՀՀ դրամ, 17,700 ԱՄՆ դոլար գումարը միայն շուրջ մեկ տարի անց՝ 2022 թվականի դեկտեմբերի 23-ին է մուտքագրվել « » ՓԲԸ-ում վարույթի մասնակցի հաշիվներին, որին ի պատասխան վարույթի մասնակցի կողմից որևէ պարզաբանում չի ներկայացվել:

Հանձնաժողովի նիստը նախագահող անդամը (Մ. Գալստյան) ընդգծեց այն իրողությունը, որ փաստական տվյալների վերահսկելի չլինելու հանգամանքով պայմանավորված՝ սույն գործում առկա փաստական հանգամանքները նույնական չեն նախորդիվ գործերով քննարկված փաստական հանգամանքների հետ: Հետևաբար, Հանձնաժողովը չի կարող կատարված իրավախախտումը նվազ նշանակություն ունեցող որակել և փաստել, որ ոչ ամբողջական հայտարարագրված տվյալը Հայտարարագրում ներկայացված չլինելու հայտարարատուի արարքով էականորեն չեն խախտվում նորմով պահպանվող հասարակական հարաբերությունները: Այս առումով, Հանձնաժողովի նիստը նախագահող անդամը հատկապես ընդգծեց, որ սույն գործով առկա փաստական հանգամանքների պարագայում արարքի (որպես եկամուտ տվյալների չհայտարարագրումը) նվազ նշանակության որակումը խթան կհանդիսանա հայտարարատու անձանց այնպիսի վարքագծի ձևավորմանը, երբ վերջիններիս կողմից ցանկացած այլ անձից կամ անձանցից կանխիկ դրամական միջոցներ ստանալու պարագայում, յուրաքանչյուր դեպքում Հանձնաժողովին կներկայացվեն պարզաբանումներ առ այն, որ դրամական միջոցները ստացվել են հարսանեկան կամ որևէ այլ միջոցառումից, իսկ այդ եղանակով ստացված եկամուտները կարող են կազմել հայտարարատու անձի տվյալ հաշվետու տարվա ընթացքում ստացված եկամուտների գերակշիռ մասը, ինչը որևէ կերպ վերահսկելի չէ: Մինչդեռ, նման մեկնաբանմամբ պրակտիկայի ձևավորումը չափազանց ռիսկային է հայտարարագրված տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգման տեսանկյունից:

Քննարկումների արդյունքում Հանձնաժողովի երկու անդամները (Մ. Գալստյան, Լ. Ալեքսանյան) եզրահանգեցին, որ սույն գործով առկա են հայտարարատու անձի նկատմամբ վարչական պատասխանատվության ենթարկելու փաստական հիմքեր, և կատարված արարքը չի կարող որակվել նվազ կարևորություն ունեցող:

Հանձնաժողովի անդամ Ա. Փաշինյանը Հանձնաժողովի մյուս երկու անդամներից (Մ. Գալստյան, Լ. Ալեքսանյան) տարբերվող՝ առանձին դիրքորոշում ներկայացրեց առ այն, որ՝

Տվյալ վարույթի շրջանակներում քննարկման առարկա հանդիսացող իրավախախտումը գնահատելիս հարկ է հաշվի առնել հետևյալ հանգամանքները.

Աներկբա է, որ այլ հավասար պայմաններում կանխիկ դրամով պահվող խնայողությունները և կանխիկ եղանակով իրականացված գործարքները, այդ թվում՝ նվիրատվության գործարքները, ռիսկեր են պարունակում, որոնք անհրաժեշտ է հնարավորինս նվազեցնել: Այս տեսանկյունից որևէ նշանակություն չունի, թե որ բաժնում է հայտարարագրվել հարսանեկան նվերների ստացման հանգամանքը:

Միևնույն ժամանակ, հանրահայտ փաստ է, որ ավանդույթի ուժով հարսանեկան միջոցառումների շրջանակներում միջոցառմանը մասնակցող հարազատները նվերներ են հանձնում հարսին և փեսային, այդ թվում (և հիմնականում)՝ կանխիկ դրամի տեսքով: Հաշվի առնելով վերը նշված գործոնները՝ իրավախախտման նվազ նշանակության որակման տեսանկյունից կարևոր է հարցին անդրադառնալ ա) կանխիկ գործարքների ռիսկայնության գնահատման և բ) հայտարարատուի վարքագծի գնահատման համատեքստում:

Հարկ է նշել, որ հարսանեկան արարողության շրջանակներում ստացված նվիրատվությունների և կատարված ծախսերի վերաբերյալ Հանձնաժողովի հարցադրումներին ի պատասխան և՛ վարույթի մասնակիցը, և՛ իր ամուսինը ներկայացրել են համապատասխան պարզաբանումներ միջոցառման հյուրերի թվի, ըստ արժույթների ստացված նվիրատվությունների, կատարված հիմնական ծախսերի բնույթի և գումարների, ինչպես նաև ստացված նվիրատվությունների շարժերի վերաբերյալ:

Արդյունքում, ներկայացված տվյալների համադրությամբ, Հանձնաժողովը եզրահանգել է, որ հայտարարագրված եկամուտների անօրինական լինելու վերաբերյալ հիմքեր առկա չեն:

Վարույթի մասնակցի վարքագծի գնահատման համատեքստում կարևոր է համարում նշել հետևյալը:

Ե՛վ վարույթի մասնակիցը, և՛ իր ամուսինը կանխիկ եղանակով նվիրատվությունները ստանալուց հետո՝ հաշվետու տարվա ընթացքում, կանխիկ դրամական միջոցների մնացորդային գումարները մուտքագրել են իրենց բանկային հաշիվներին՝ ապահովելով դրանց շարժի վերահսկելիությունը: Միաժամանակ, ի պատասխան Հանձնաժողովի դիտարկումներին առ այն, որ դրամական միջոցների կանխիկ տնօրինումը՝ համադրված դրանց ծագման աղբյուրի կամ այլ տվյալների հետ, Հանձնաժողովի կողմից դիտարկվում է որպես ռիսկային ցուցիչ և առաջարկվում է դրամական միջոցները տնօրինել անկանխիկ եղանակով, Հայտարարատուն տեղեկացրել է, որ առաջարկն ընդունվում է ի գիտություն՝ կանխիկ գումարի հետագա օգտագործման համար:

Անդրադառնալով իրավախախտման նվազ նշանակության որակման չափանիշներին և նպատակներին՝ հարկ է նշել, որ տուգանքի կիրառումն ինքնանպատակ չէ և Հանձնաժողովի կանխարգելման մանդատի համատեքստում պետք է միտված լինի հայտարարատուների վարքագծի փոփոխությանը: Ըստ այդմ, իրավախախտման նվազ նշանակության որակման չափանիշները սահմանելիս կարևորում է հայտարարատուների՝ կանխիկ գործարքների դեպքում ռիսկերի նվազեցմանը միտված վարքագծի խրախուսումը:

Տվյալ դեպքում սկզբունքային հարցը հետևյալն է՝
կանխիկ եղանակով ստացված նվիրատվություններն այլ բաժնում հայտարարագրելու դեպքում վարքագծային փոփոխությանը միտված ո՞ր մեխանիզմն է ավելի արդյունավետ՝ տուգանքի կիրառու՞մը, թե՞ նշված գործարքների առավելագույն թափանցիկության ապահովման և կանխիկ եղանակով ստացված միջոցներն անկանխիկ դարձնելուն ուղղված խրախուսման մեխանիզմների կիրառումը:

Ակնհայտ է, որ տույժի կիրառումն ինքնին չի կարող կանխիկ գործարքների և կանխիկ եղանակով պահվող դրամական միջոցների հետ կապված ռիսկերը չեզոքացնել, իսկ որոշ դեպքերում, ընդհակառակը՝ կարող է հանգեցնել չհայտարարագրվող (ստվերային) եկամուտների և ծախսերի ավելացմանը:

Դրան հակառակ՝ կանխիկ եղանակով ստացվող նվիրատվությունների դեպքում (երբ միանվագ նվիրատվությունները չեն գերազանցում օրենքով սահմանված շեմը, բայց դրանց հանրագումարը գերազանցում է հայտարարագրման ենթակա եկամուտների շեմը) դրանց վերաբերյալ մանրամասն պարզաբանումների և կանխիկ դրամական միջոցներն անկանխիկի վերածելուն միտված խրախուսական արդյունավետ մեխանիզմների կիրառումը կարող է հանգեցնել վարքագծային փոփոխության:

Միևնույն ժամանակ, հարկ է նկատել, որ նշված դեպքերում կանխիկ դրամական միջոցները բանկային հաշիվներ տեղափոխելու փաստն ինքնին չի չեզոքացնում արդեն իսկ կանխիկ եղանակով կատարված գործարքի ռիսկը, այլ միայն ապահովում է դրա հետագա շարժի վերահսկելիությունը, ուստի յուրաքանչյուր առանձին դեպքում անհրաժեշտ է պարզաբանումներ ստանալ միջոցառման մասնակիցների թվի, ստացված նվիրատվությունների ընդհանուր գումարի, կատարված ծախսերի, ըստ անհրաժեշտության, նաև՝ խոշոր նվիրատուների, նրանց հետ առկա կապի բնույթի, օրինական եկամուտների և այլ հանգամանքների վերաբերյալ, գնահատել ռիսկերը և հանգել համապատասխան եզրակացության:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ վարքագծի կանոնների, բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների խախտումների, շահերի բախման հարցերով, ինչպես նաև «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հանրային ծառայողների էթիկայի հանձնաժողովների եզրակացությունների վերանայման արդյունքում Հանձնաժողովն ընդունում է եզրակացություններ:

Հանձնաժողովի **իրավասությանը վերապահված այլ հարցերով** Հանձնաժողովն ընդունում է որոշումներ:

Նույն հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի եզրակացություններն ու որոշումներն ընդունվում են Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Օրակարգում ներառված հարցի քննարկմամբ Հանձնաժողովն **արձանագրեց.**

Հանձնաժողովում 2024 թվականի մարտի 13-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության և մյուս նյութերի հիման վրա Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված իրավախախտման վերաբերյալ գործի քննության արդյունքում, Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնություն ապահովված չլինելու հանգամանքով պայմանավորված, կոլեգիալ մարմնի կողմից քննվող վարչական իրավախախտումների վերաբերյալ թիվ ՎԻՎ/55/2024 գործով որոշում չկայացվեց:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ **ԱՐԱՄԱՅԻՍ ՓԱՇԻՆՅԱՆ**

ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ